

ԿԱՐԾԻՔ

Մարիանա Օհանյանի

*Հին Հունական և Լատինական Տերմինների Կիրառությունը
Տեսական և Գործնական Բժշկության Մեջ*

հոդվածի վերաբերյալ :

Տպագրության ներկայացված սույն աշխատանքը քննության է առնում տեսական և գործնական բժշկության մեջ հին հունական և լատինական տերմինների կիրառությանը վերաբերող հարցեր: Ըստ էության աշխատանքը կատարված է հոդվածագրի ատենապետության թեմայի շրջանակներում և շատ արդիական է : Արդիականությունը պայմանավորված է հենց այն հանգամանքով, որ այժմ միտում է նկատվում թարգմանելու գիտական ոճում գործածվող տերմինները, սակայն բժշկագիտությունը այն եզակի բնագավառներից է որտեղ տերմինների, հատկապես հունա-հռոմեական, թարգմանությունը միշտ չէ, որ տալիս է ցանկալի արդյունքներ: Ավելին, հունա-հռոմեական տերմինները հանդիպում են բժշկագիտական տարբեր տեքստերում, դրանք միջազգային բնույթ ունեն , քաջ ծանոթ են մասնագետներին և թարգմանական անհրաժեշտություն չեն ներկայացնում: Ներկայացված գիտական հետազոտությունը բացահայտում է, որ բժշկագիտական տեքստը իրոք, հարուստ և ինքնատիպ լեզվական նյութ է պարունակում, իսկ Մարիանա Օհանյանը ի վիճակի է լուրջ գիտական հետազոտություն կատարել:

դոցենտ, բ.գ.թ. Գասպարյան Նաիրա

Օհանյան Մարիաննա

Երևանի Պետական Համալսարան

Հին հունական և լատինական տերմինների կիրառությունը տեսական և

գործնական բժշկության մեջ

Տերմինաբանական բառապաշարը լեզվի այն ոլորտն է, որտեղ բառաստեղծման գործընթացը տեղի է ունենում ավելի ակտիվորեն և, որին բաժին է ընկնում օտարալեզու փոխառությունների մեծագույն տոկոսը: Փոխառությունների ճնշող մեծամասնությունը, օրինակ, անգլիական կենսաբանական և բժշկական տերմինաբանության մեջ՝ հունարեն և լատիներեն լեզուներից են, բայց հանդիպում են նաև փոխառություններ ֆրանսերենից և, որպես բացառություն՝ իտալերենից, հին ֆրանսերենից և ռուսերենից (Лотте, 1961:28) : Փոխառված տերմինները հաճախ ենթարկվում են հնչյունաբանական, քերականական և բառ-իմաստաբանական կառուցվածքային փոփոխությունների: Հարկ է նշել, որ բառագիտության մեջ տերմինի սահմանման առնչությամբ միասնական կարծիք չկա: Կասկած չի հարուցում, որ տերմինաբանությունը մտնում է լեզվի համաժողովրդական բառապաշարի մեջ, կատարում է հասարակայնորեն անհրաժեշտ գործառնություն, քանի որ տերմինի մեջ չկա այնպիսի բան, որը տարբերի նրան այլ բառերից, այսինքն տերմինները ստեղծվում են համաժողովրդական հիմքի վրա, այնքանով, որքանով, որ անհրաժեշտ է տվյալ իրականություն մուտք գործած նոր երևույթներն ու իրողությունները լիարժեքորեն արտահայտելու: Համարվում է, որ տերմինը ավելի հաճախ միանշանակ է նույնիսկ համատեքստից դուրս, քանի որ համատեքստում յուրաքանչյուր բառ, որպես կանոն, միանշանակ է (Гореликова, 2002:34): Ինչպես նշում է Լ.Ա.Բուլախովսկին, «բառերը ապրում են կապակցված խոսքում, նախադասություններում, և այդ պատճառով համատեքստից սովորաբար պարզ է դառնում, թե ինչ է ցույց տալիս նույնիսկ հոմանիշներով հարուստ այնպիսի լեզուների փորձը, ինչպիսին է չինարենը կամ անգլերենը, թե հատկապես ինչ նշանակություն ունի այս կամ այն նույնանուն բառը, և լեզվի պրակտիկայում սխալ հասկացման լուրջ սպառնալիք համեմատաբար հազվադեպ է առաջանում» (Булаховский 1953:47):

Անգլիական կենսաբանական և բժշկական տերմինները, որոնք փոքր թիվ են կազմում և մուտք են գործել համաժողովրդական բառապաշար, հիմնականում փոխառված են հունարեն և լատիներեն լեզուներից: Մեծ թվով միաբառ տերմիններ (մոտ 80%) ստեղծվել են գիտնականների կողմից (Даниленко, 1977): Նմանօրինակ տերմինները կազմվում են, գլխավորապես, օտարալեզու տարրերից և իբրև ինքնուրույն բառեր աղբյուր լեզուներում գոյություն չունեն: Գիտնականների կողմից ստեղծված գիտական տերմինները որպես կանոն միանշանակ են:

Ինչպես ցույց տվեց վերլուծությունը, բժշկական բառապաշարի ստեղծմանը մասնակցող բառակազմական միջոցների շարքում զարգանում է ոճաբանական սահմանազատումը:

Հունական տերմինաբաղադրիչները, վերջածանցները և նախածանցները մասնակցում են նոր տերմինների ստեղծմանը, իսկ ռուսալեզու ձևերը կազմում են պրոֆեսիոնալիզմներ, համագիտական և համընդհանուր բժշկական բառապաշար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ կլինիկական տերմինի մեջ իրենց արտահայտությունն են գտնում և առաջին պլան են մղվում ոչ միայն գիտական հասկացության բուն էությունն արտահայտող գերակայող հատկանիշները, այլև ուսումնասիրվող երևույթի բազմազան գույգորդումային և սուբյեկտիվ բնութագրերը: Հետևաբար, գիտական գիտելիքի զարգացման պատմական ժամանակաշրջանով էլ պայմանավորված է նրա ընկալումը:

Որոշ տերմիններ կարող են ներկայացնել միաժամանակ երկու կամ երեք հասկացություններ (օրինակ՝ ժամանակի և անձի, գործընթացի և ժամանակի հասկացություն, ինտենսիվության և ժամանակի հասկացություն և այլն), ինչպես նաև միաժամանակ արտացոլել հատկանիշներ, որոնք հատուկ են տարբեր հասկացությունների (օրինակ՝ նախընթացություն և տևականություն): Հասկացություններին հատուկ հատկանիշների այդպիսի սերտաճը՝ արտացոլված միևնույն տերմինի մեջ, հիմք է ծառայում տերմինի հորինվածքային իմաստաբանության ձևավորման համար: Տերմինն ունենալով ներքին բարդ իմաստաբանական կառուցվածք, անվանման ինքնուրույն միասնական միավոր է (Обчаренко 1969: 41-42):

Տերմինները, լինելով որևէ որոշակի բնական կամ արհեստական լեզվի միավորներ, օժտված են հատուկ տերմինաբանական նշանակությամբ՝ առաջացած տարերայնորեն կամ հատուկ գիտակցական կոլեկտիվ պայմանավորվածությամբ: Տերմինները բավականաչափ ճշգրիտ և լիարժեքորեն արտացոլում են համապատասխան հասկացության հիմնական, կարևոր հատկանիշները, ինչպես նաև գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակը տվյալ փուլում:

Քանի որ բժշկության լեզուն արտացոլում է մարդկության համար կարևորագույն գիտելիքների ոլորտ և վերաբերում է, հատուկ նպատակների համար, հնագույն լեզուների շարքին, ինչպես նաև աչքի է ընկնում արտահայտման միջոցների մեծ բազմազանությամբ, այն միշտ գրավում է տերմինաբանների ուշադրությունը: Բժշկական տերմինաբանության մեջ այդ պրոֆեսիոնալ լեզվի և բժշկական տերմինաբանության տարբեր ենթահամակարգերի առանձին ուղղությունների հարուստ փորձ է կուտակվել: Հայտնի է, որ գիտական ոճը բնութագրող յուրահատուկ բառաշերտ են կազմում տերմինները: Թեև սովորաբար ընդունված է, որ ամեն մի առանձին հասկացություն պետք է արտահայտվի մեկ տերմինով և, ընդհակառակը, ամեն մի առանձին տերմին պետք է արտահայտի միայն մեկ հասկացություն. փորձը ցույց է տալիս, որ ցանկացած հատուկ տերմինաբանության մեջ հանդիպում են տերմին-հոմանիշներ և բազմիմաստ տերմիններ (Булаховский, 1953: 47):

Ըստ Ռեֆորմատսկոյ՝ տերմինաբանությունը տվյալ գիտության հասկացությունների համակարգն է՝ ամրագրված համապատասխան բանավոր արտահայտության մեջ (Реформатский, 1959: 27): Եթե ընդհանուր լեզվում (տվյալ տերմինաբանությունից դուրս) բառը կարող է բազմիմաստ լինել, ապա, հայտնվելով որոշակի բնագավառ ներկայացնող տերմինաբանության

մեջ, նա ձեռք է բերում մենիմաստություն: Անգլիական կենսաբանական տերմինները, որոնք համաժողովրդական բառապաշար են ներթափանցել հունարենից և լատիներենից իբրև փոխառություններ, կազմում են կենսաբանական տերմինաբանության միայն մի փոքր մասը: Տերմինաբանությունը, որպես գիտական տերմինների համակարգ, իրենից ներկայացնում է ենթահամակարգ լեզվի ընդհանուր բառապաշարի համակարգում (Караханян, 1965: 75): Լեզվի բառապաշարային համակարգի սահմաններում տերմինները դրսևորում են նույն հատկությունները, ինչ որ այլ բառեր, այսինքն նրանց հատուկ է հակիմաստությունը և իդիոմատիկությունը: Օրինակ, *valve* բժշկության մեջ նշանակում է **կափույր** (*valve of vein* նրակային կափույր), ռադիոտեխնիկայում էլ**նկտրոնային լամպ**, հիդրավիկայում **փականք**, **power** տերմինը ֆիզիկայում նշանակում է **հզորություն**, **էներգիա**, մաթեմատիկայում՝ **աստիճան**, օպտիկայում՝ **ոսպնյակի մեծացման ուժ**, բժշկության մեջ **ընդունակություն** (coagulating power):

Քննությունից պարզ է դառնում, որ քիչ թե շատ հստակ ածանցներ են մասնագիտացվել կենսաբանական և բժշկական տերմինաբանության մեջ, այսինքն այնտեղ, որտեղ տերմինները կառուցված են, հիմնականում, լատիական և հունական արմատներից: Օրինակ՝ – *us* [s] վերջածանցը՝ եզակի թվով գոյականների համար, իսկ – *i* [ai] վերջածանցը՝ հոգնակի թվով գոյականների համար. *alveolus* – *alveoli* (ալվեոլա, ալվեոլներ). – *um* [m] վերջածանցը՝ եզակի թվով գոյականների համար, իսկ – *a* հոգնակի թվով գոյականների համար՝ *cranium* – *crania* (գանգ – գանգեր): Ի տարբերություն քերականական նյութի ավանդական մատուցման հերթականության, որը սկսվում է բայով, լատիներենում այն սկսվում է գոյականով և ածականով, քանի որ դեղագիտական տերմինաբանության հիմքն են հանդիսանում գոյականն ու ածականը, իսկ բայը հիմնականում կիրառվում է միայն դեղագրության և վարժություններում նախադասությունների թարգմանության համար: Ի դեպ, գոյականն ու ածականը ամենամեծ կիրառություն ունեցող խոսքի մասերն են, ոչ միայն դեղագիտական, այլ նաև ամբողջ բազմաճյուղ բժշկական տերմինաբանության մեջ: Ժամանակակից շատ լեզուներում գիտական ու տեխնիկական տերմինների կազմության համար կիրառվում են հունարեն և լատիներեն բառերն ու բառակազմիչ տարրերը, օրինակ՝ ֆիզիկա, էնդոկրինոլոգիա, գլոբալ, ինֆորմատիկա, մուտագիա, ալերգիա և այլն: Դեռ ավելին, ոչ միայն գիտական տերմինաբանության մեջ, այլ նաև յուրաքանչյուր որ իր առօրյա խոսքում գործածում է այնպիսի սովորական բառեր, ինչպիսիք են՝ պրեզիդենտ, ինստիտուտ, ռեկտոր, ֆակուլտետ, դեկան, պրոֆեսոր, էֆեկտ, ասպիրանտ և այլն (Առաքելյան, Բալաբանյան, 2003: 57): Բժիշկների և դեղագետների համար լատիներենն ու հին հունարենն լեզուները հատուկ նշանակություն և կիրառում ունեն: Լատիներենը, ինչպես գրաբարը, սանկրիտը, հին հունարենը, մեռած լեզու է: Այն պատկանում է հնդեվրոպական լեզվախմբի իտալիկ ճյուղին: Մինչև 19-րդ դարի կեսը շատ գրքեր և համարյա բոլոր թեզերը հրատարակվում էին լատիներենով: Բժշկության բազմադարյան զարգացման ընթացքում

մեծ է եղել լատիներենի դերը, որը միաժամանակ իր մեջ ներգրավել է հին հունարենի բառապաշարի հարուստ ժառանգությունը: Հին հունարենի և լատիներենի միջոցով ստեղծված բժշկական տերմինաբանությունը շատ հարմար է գիտնականների միջազգային հաղորդակցման համար: Դարերի ընթացքում բժշկության ամենատարբեր բնագավառների հեղինակությունները հարստացրել են հունալատիներեն տերմինաբանությունը: Հենց այս ավանդությունն էլ մինչև օրս դեռ որոշում է ժամանակակից բժշկական տերմինաբանության լեզվական զարգացումը: Անտիկ լեզուները պատկանում են բոլոր ազգերին, հանդիսանում են այսպես կոչված «ոչ որի բառապաշար»: Եթե կենդանի լեզուներում բառերը մեծ մասամբ բազմիմաստ են, գործածման ընթացքում ձևեր են բերում փոխաբերական լրացուցիչ իմաստներ, ապա մեռյալ լեզուներում դա հնարավոր չէ: Նրանցից փոխառնված բառերը, որպես օրենք, գործածվում են միայն մեկ իմաստով: Մեռյալ լեզուների բառերին և բառակազմիչ տարրերին կարելի է տալ պայմանական, նեղ մասնագիտական իմաստ, որը նրանք չունենին այդ լեզուներում (Առաքելյան, Բալաբանյան, 2003):

Օրինակ, *kytos* հունարեն բառը նշանակում է որևէ իր, որն իր մեջ որևէ բան է պարունակում, ուռուցիկ է՝ անոթ: Լատինացված *cytus* տերմինն արտահայտում է բջջաբանության հիմնական իմաստներից մեկը՝ բջիջ: Օրինակ, *cytologia* - բջջաբանություն, *leucocytus* - արյան սպիտակ գնդիկ և այլն:

Աշխարհի շատ երկրներում դեղատոմսերը գրվում են լատիներենի քերականական կանոնների համաձայն: Եվորապական լեզուներից բժշկական տերմինաբանության մեջ ներմուծված մի քանի հատուկ անուններում կարելի է հանդիպել *w* (դուբլվե) տառը, օր. *ungwentum, Wilkinsoni* – Վիլկինսոնի քսուր:

Բժշկական տերմինաբանության մեջ շատ հաճախ հանդիպում ենք այնպիսի տերմինների, որոնք արտահայտված են գոյական- ածական շարույթով:

Օր. *tincura amara* - դառը թուրմ

sirupus amarus - դառը օշարակ

medicaetum rubrum – կարմիր դեղանյութ

Բժշկական տերմինաբանության մեջ բայերը հիմնականում գործածվում են դեղագործության մեջ՝ դեղամիջոցը պատրաստելու և այն բաց թողնելու, ցուցում տալու համար: Բժշկական տեքստերում, թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում, հաճախ հանդիպում են հրամայական և ըղձական եղանակի ձևերը, որոնք արտահայտում են հրաման և ցանկություն:

Օր. *Recipe* – վերցրու

Da in ampullis – տուր սրվակներով

Ինչպես արդեն վերը նշեցինք, լատիներենում բժշկական և դեղագիտական գրականության մեջ ըղձական եղանակը լայն կիրառություն ունի:

Ըղձական եղանակը հաճախ գործածվում է հրամայական եղանակի փոխարեն՝ արտահայտելու համար բժշկի հրամանը, ցուցումը դեղագործին ինչպես պատրաստել, պահել և բաց թողնել դեղամիջոցը:

Բժշկական տերմինաբանության գիտակցական յուրացման համար անհրաժեշտ է.

ա) իմանալ առավել գործածական հունալատիներեն տարրերի իմաստը և ստուգաբանությունը, որոնցից բաղկացած են տերմինները,

բ) հասկանալ բառի, տերմինի իմաստը փոխող ածանցների բառակազմական հնարավորությունները,

գ) իմանալ առավել գործածական հոմանիշները և հականիշները:

Բժշկական տերմինաբանության մեջ կան շատ հունարեն և լատիներեն հոմանիշներ: Պետք է ասել, որ անատոմիական և դեղաբանական տերմինները հիմնականում լատիական ծագում ունեն, իսկ կլինիկական և ախտաբանական տերմինները՝ հունական: Ասվածը հասկանալի դարձնելու համար դիմենք օրինակների օգնությանը:

Անատոմիայում

articulatio – հողավորում, հող

ախտաբանության մեջ

arthron – հողավորում, հող

Դեղաբանության մեջ

aqua – ջուր

ախտաբանության մեջ

hydor – ջուր

Սկսած վերածննդի ժամանակաշրջանից՝ լատիներեն և հունարեն ծագում ունեցող բազմաթիվ, այդ թվում նաև՝ բժշկակենդանաբանական տերմինները, փոխառնվեցին անգլերենում, առանց - s վերջավորության: Նրանք ենթարկվեցին լատիներենի հինգ հոլովումների հոգնակի թվի կազմության կանոններին: Այսպիսի գոյական տերմինների մի մասն ունի հոգնակի թվի համար երկու վերջավորություն (մեկը լատիներեն, մյուսը՝ անգլերեն -s):

Տերմինաբանական կայուն բառակապակցությունը սովորաբար կազմվում է ածականի և գոյական անվան համակցությամբ, ածական դերբայը գոյականի կամ մի քանի գոյականների հետ, միացած նախդիրներով. *driving pin* (տարիչ մատ), *end pin* (միացնող մատ), *pitch of thread* (պարուրակային քայլ): Բարդ արտահայտված տերմինը բառի միջոցով ավելի ու ավելի է ներթափանցում անգլիական գիտա –տեխնիկական գրականություն, քանի որ բարդ բառի նշանակությունը միշտ ավելի ճշգրիտ է ու մասնավորեցված, քան համապատասխան բառակապակցության նշանակությունը: Ս.Ն. Գորելիկովան բարդ բառերի թարգմանության համար ձևակերպում է երկբաղադրիչ տերմինների ստեղծման մի շարք ձևական կանոններ, քանի

որ «նրան հաջողվում է պարզել բաղադրիչների նշանակությունները, ապա այդ կանոնները կօգնեն բացահայտել բարդ բառի նշանակությունը» (Гореликова, 2002. №6):

Այսպիսով, հին հունական և լատինական տերմինաբանությունը կիրառելի է գիտության տարբեր բնագավառներում, հատկապես տեսական և գործնական բժշկության մեջ: Սկսած բժշկագիտության ծագման դարաշրջանից մինչև այսօր այն անընդհատ հարստանում է հունալատինական նորանոր տերմիններով, քանի որ հունալատինական տերմինաբանությունը օգնում է տարբեր ազգերի գիտնականներին միջազգային հաղորդակցության յլրրտում:

Оганян Марианна Миграновна

Употребление древнегреческих и латинских терминов в научной и практической медицине является для человечества важнейшей сферой науки. Язык медицины относится к ряду древнейших языков, то и выделяется огромным средством разнообразием средств выражений, чем и привлекает внимание терминологов. Древнегреческая и латинская терминология применима в разных сферах науки, особенно в научной и практической медицине. Начиная с древней эпохи возникновения медицины и до наших дней, все время обогащается все новыми и новыми терминами и способствует общению ученых всего мира.

The Use of Old Greek and Latin Terms in Theoretical and Practical Medicine

The Greek and Latin terms are used in various spheres of science mainly in theoretical and practical medicine. Since the very start of the development of the language of medicine, Greek and Latin words have been used as terms. Actually they are internationally recognised which helps the scientists all over the world to communicate efficiently.

Գրականություն

1. Առաքելյան Հ.Թ., Բալաբանյան Վ.Ս. Լատիներեն լեզու և դեղագիտական տերմինաբանություն, Երևան, 2003.
2. Булаховский Л.А. Введение в языкознание, ч II. М., 1953.
3. Даниленко В.П. Русская терминология. М., 1977.
4. Капанадзе Л.А. Взаимодействие терминологической и общеупотребительной лексики - Развитие современного русского языка. М., 1965.
5. Капанадзе Л.А. О понятиях «термин» и «терминология» - Развитие лексики современного русского языка. М., 1965.

6. Гореликова С. Н. Природа термина и некоторые особенности терминообразования в английском языке - Вестник ОГУ №6., 2002.
7. Лотте Д. С. Образование системы научно-технических терминов - Основы построения научно-технической терминологии. М., 1961.
8. Овчаренко В.М. Термины, аналитическое наименование и номинативное определение - В кн. *Современные проблемы терминологии в науке и технике*. М., 1969.
9. Реформатский А. А. Что такое термин и терминология? - *Вопросы терминологии*. М., 1961.